

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԳՐԳԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ընդհանուր ժողովի նախագահը յայտնում է, որ հինգշաբթի, յունիսի 13-ին, երեկոյեան ժամի 7 1/2-ին, Գումայի դահլիճում կը կայանայ տարւելի 13-ի և մայիսի 4-ի ընդհանուր ժողովի շարունակութիւնը: Նիստի պարագմունքները լինելու են.

- 1) Անցեալ ժողովի արձանագրութեան ընթերցումը:
- 2) Թիֆլիսի պ. նահանգապետի առաջարկութեան ընթերցումը:
- 3) 1890 թվի հաշիւի ընթերցումը և վաւերացումը:
- 4) 1891 թվի նախահաշիւի ընթերցումը և վաւերացումը:
- 5) Լրացուցիչ ընտրութիւններ:

2—2

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի ջրանցքի խնդիրը.— Ներքին Տեսուչի ջրատնտեսական գոնէր. Գաւառական Ինտերվենցիա. Նամակ Ներքին-Արտաքին. Նամակ Գաւառային. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՆԴԻՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Էրզրումի և Կարսի արհեստագործների համայնական կարգերը:

ԹԻՖԼԻՍԻ ԶԲԱՆՅՈՒԹԻ ԽՆԴԻՐԸ

Այժմ միայն երբ բացառիկ շնորհ ամառ է տիրում Թիֆլիսում, յայտնակ է, որ մեր նախկին քաղաքային վարչութեան ձեռքով կառուցված մեծածախ ջրանցքը կատարելապէս անպէտք է: Հաշուարկի աղբիւրների ջուրը սպառւում է և մեր ջրանցքը, որը առաջ էլ օրական 300,000 վէրջից աւելի երբեք չէր կարող մատակարարել քաղաքին, այժմ դրանից էլ պակաս ջրի քանակութիւն կարող է հայթայթել: Իսկ յայտնի է որ ջուրը բաւականաչափ լինելու թէ բնակիչների համար խմելու ու լուսավորւելու և թէ քաղաքի փողոցները ջրով չեն համար հարկւում: Եւ հաշիւ առնուած օրական 6 վէրջի խրաբանչիւր բնակչի վրա՝ Ուրեմի 100,000 բնակիչների վրա մեր ջրանցքը պէտք է մատակարարէր օրական առնուազն 600,000 վէրջի ջուր: Բայց արանց չը պէտք է մոռանալ որ շոգ եղանակի ժամանակ ջրի կորուստ էլ է լինում: Իսկ մեր ողորմելի ջրանցքը, որը այդքան գումարներ է կուլ տուել, այն էլ

եթէ ջուր կրող մեքենաները օրական 20 ժամ բանեն, հաշիւ հազ կարող է մեզ օրական 300,000 վէրջի ջուր հայթայթել: Եւ այն ժամանակ, երբ ջրանցքը նոր պիտի կառուցվէր, մեր քաղաքային գործիչները արհամարհանքով էին նայում հասարակաց կարծիքն արտայայտող մամուլի վրա, որը պահանջում էր ջուր անցկացնել ոչ թէ Հաւալայի աղբառ աղբիւրներից, այլ կամ Կուր գետի բարձրութիւններից կամ, աւելի էլ լաւ, Արագվա գետից, որի ջուրը համեղ, պարզ, մաքուր է և այնքան առատ կը լինէր միշտ, ի հարկէ, որ այդ ջրով ոչ թէ միայն կարելի կը լինէր լիութեամբ բաւականութիւն տալ քաղաքի բոլոր պէտքերին, այլ ուղղակի հեղեղել էր քաղաքը:

Եւ ահա այժմ, երբ արդէն ահագին ծախսեր ենք արել իր բուն նպատակին չը հասնող ջրանցքը կառուցանելու համար, — շուտով երեւի ստիպված կը լինենք խելքի գալ և նորից հաշուել ծախսեր անել մի նոր և աւելի նպատակաւոր մարմնի կառուցանելու համար:

Վերջ է վերջը, ուզեն չուզեն, քաղաքը ստիպված կը լինի ջրանցք անցկացնել Արագվա գետից: Իսկ երբ որ մի ժամանակ մամուլն արձարծում էր այդ հարցը, — մեր անհեռատես, բայց իրանց հեռատես համարող գործիչները արհամարհական ժպիտով էին նայում խելացի և գործնական միտք հասկացող ջանք անող մամուլի յօդուածներին վրա:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԲԱՆՈՐՈՒԹԵԱՆ ԶՈՀՆՐ

Վաղուց գիտենք, որ Կ. Պօլսում հասարակական բոլոր գործիչները և գործընկերները նիւթական խոհուկ վիճակի մէջ են, բայց երբեք չենք կարող երևակայել, որ դրանց դրութիւնը այնքան անտանելի, նոյն իսկ ողբալի է, որքան երևում է վերջին փաստերից:

Այս օրերս առիթ ունեցանք կարդալու Կ. Պօլսի լրագրիներից մէկում, որ այնտեղի մի դրող — անունը չենք տալիս, — ուրաջ կանոնով խոսում է արեւ: Այդ լուրը այնքան զրուհի, այնքան ջղեր ցնցող էր, որ նոյն իսկ Կ. Պօլսի հիւանդանոցում հասարակութեանն էլ ստիպեց կարմրել, և այդ պատճառով մի քանի հոստներ աշխատեցին թագցնել իրողութիւնը, ասելով թէ՛ հայր մուրաց կանոնով խոսում ոչ թէ նիւթական նեղութեան պատճառով է եղել, այլ հետեւանք հոգեկան ձգտումներին:

Չը գիտենք, ճշմարիտ, եթէ Կ. Պօլսում այժմ այնպիսի պիտի ապառնէր կան, որոնք հոգեկան ձգտումներից մութացկանութիւն են անում, այն ժամանակ նախ հարկաւոր էր այդ հոգեկան ձգտումները ունեցողներին աղքատիւն չլիարժանացնում, անհաւատել:

Սակայն մեզ թուում է, որ այն մի քանի սօփիստութիւնները, որոնք լոյս տեսան Կ. Պօլսի լրագրիներում, մի նպատակով միայն ունենին, — այն է ծածկել իրողութիւնը: Մենք առիթ ունենք այդպէս կարծեւ, քանի որ Կ. Պօլսի ուրիշ զբաղմունքներից և գործունեւից շատերն էլ համարեալ թէ մութացկանութիւն անելու վիճակին են հասնում: Պարոնեանի նման տաղանդաւոր մարդը հիւանդ պառկում է ամիսներով, կարօտ կօպէկներ, և մեռնում է, թողնելով ահագին ընտանիք, զուրկ օր և միջօրներից: Աղքատի ժողովի փոխ-առնակաւոր հիւանդ պառկած է, և չը նստած, որ երկար տարիներ ծառայել է հասարակական հիմնարկութիւններին, բայց ոչինչ միջոց չունենալով, կարօտ է հասարակութեան կօպէկներին: Միթէ հարկաւոր են էլի նոր օրինակներ:

Միթէ կարծում էք, ի՞նչ կրկնապատիւ հասարակութեամբ այն փայլուն տաղանդը, որպիսին էր Աղաման, նոյնպէս կօպէկների կարօտ չէր լինի, եթէ յոյս դնէր Կ. Պօլսի վրա, և ուսանայեր օգնութեան ձեռք չը կարկառէին:

Ի՞նչ կը նշանակէ այդ:

Ճշմարիտ է, մեր, Կովկասի հայերի մէջ էլ, գրողը, հասարակական գործողը, եթէ ուրիշ կողմնակի պարագմունք չունի՝ նիւթական վարձատրված չէ: Ոչ թէ Կովկասի հայերի, նոյն իսկ ուսաց գործընկերը դեռ նիւթական ապահովութիւն և հարստութիւն չեն ստանում իրանց մտաւոր աշխատանքներից, իրանց գրչով: Սակայն չը պէտք է մոռանալ, որ բաւական տարբերութիւն կայ հարուստ չը լինելու և մութացկանութիւն անելու դրութեան մէջ: Մեր կողմի գրողները և գործիչները չեն հարստանում, բայց քաղցած էլ չեն մեռնում: Վերջապէս ուրիշ բան կը լինէր, երբ Կ. Պօլսում այս տիւր երեւոյթ բացառութիւն լինէր, ինչպէս կարող է պատահել և Կովկասում, նոյն իսկ և ուսաց գործընկեր մէջ: Բայց ինչ կասէք, երբ Կ. Պօլսում, հրատարակ բառերից այդ աշխարհում, բոլոր գործողները և գործընկերը, անանց բացառութեան, աղքատ են, չքաւոր և նեղ վիճակի մէջ: Դա մի ընդհանուր երեւոյթ է այդ աշխարհում:

Եւ տարբաբաղաւոր, այդ ընդհանուր երեւոյթ մի աղեղ ստուեր է գցում թիւրքահայերի վրա, իբրեւ ապացոյց, որ այդ երկրում դեռ տիրում է մտաւոր սնանկութիւն, և որ ինքը ժողովուրդը և հասարակութիւնը բարոյապէս և մտաւորապէս այնքան մեռած, թմրած և խակ են, որ չեն կարողանում պահել, պահպանել այն մարդկանց, որոնք ծառայում են մտքին, հասարակական գործին, ժողովուրդին:

Կ. Պօլսում կարող է փառաւոր կերպով ապրել շողոքորթել էֆէնդին, ամեն սրբութիւն ոտի տակ տուող մատնիչը, սրան նրան խաբող ստաւֆը, բայց այն մարդիկ, որոնք լաւ թէ վատ, ճշմարտութեան զինուոր են գրվել և ժողովուրդին են ծառայում, — պէտք է քաղցած ապրեն և քաղցած էլ մեռնեն:

Դա է դուք: պատճառը, որ Բոսֆորի ափերում գործընկեր էլ, հասարակական գործողներն էլ, սո-

ղաւարճանայ՝ երբ անոնց վրայ լոյս, միշտ հարցնելով ճանապարհորդաց: (Յուշիկը հայր. հայր. հատ. Բ. երես 521):

Մենք դիմաւոր մէջ ընդհանրապէս կտորները, որպէս զի հասկանալի լինի թէ եւրօպական կարգերով հետաքրքրւող և մեծադուր մի անձն՝ որպիսին էր սուլթան Մուրադը, անուշտ ուրախութեամբ պէտք է հաստատէր արհեստագործների վաղմիւ կարգերը, մանաւանդ որ համայնքը առանց տիրապետող իշխանութիւնը գլխացաւանդ պատճառելու՝ հակում էր բարձրելու մաքրութեան և կարգ ու կանոնի վրա, իսկ հարկաւոր ժամա, նախ կառավարութիւնը էստաֆները կառավարիչները միջոցով իր կարգադրութիւնները յայտնում էր արհեստագործներին և շուտափոյթ կատարել տալիս: Յաւանք էր, որ տէր հօր յիշած թողնել անկարող ենք ձեռք բերել, որովհետեւ, ինչպէս լավում է, այդ թղթերը կորած, անհետացած են:

II.

Տաճիկների կարծիքով հիմնական արհեստների թիւը 32 էր: Կարող մէջ 10—12 էստաֆ միայն կար և նրանք եւ ըստմամբ չէին, ուստի և ամբողջ քաղաքի էստաֆների վրա հակում էր միայն մի շին, այն ինչ էրզրումում գրեթէ լուրաքանչիւր էստաֆ ունէր բացի ուստաքաղց և մի շին, որ մի աստիճան պաշտօնով բարձր էր ուստաքաղց: Այժմ երկրամագործ դարբինը չէր ունէր և ամեն տեսակ երկաթի գործիչներ, հիւանդ չինում է ամեն տեսակ փայտեայ առարկաներ, դերձակը կարում է ամեն տեսակ կար և այլն: Իսկ էստաֆական կարգերի ժամանակ՝ որ և է արհեստի ստորաբաժանումները ինքնաբեր ջոկված

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Թէ կարսի, թէ Ախալցխայի և թէ Ախալքալաքի արհեստագործների էստաֆական կարգերը հարկաւոր միմիայն են միմեանց, որովհետեւ այդ տեղերի ամբողջ ժողովուրդը իր այդ սովորութիւնները առել է էրզրումից: Վերջին երկու քաղաքները ու հայ բնակիչները գաղթել են յիշեալ քաղաքից 1828—30 թուականներին, իսկ կարսը մինչև վերջին ուստաֆական պատերազմը շարունակ գտնվել է էրզրումի էստաֆական կարգերի աղբիւրների տակ: Կարսի արհեստագործների թիւը սակաւ լինելու պատճառով՝ համայնական կարգերն ևս այնքան մանրամասնութեամբ չեն պահպանվել, որքան այդ եղել է էրզրումում: Բայց նախ քան գոյութիւն ունեցող էստաֆների մասին խոսելը՝ հարկաւոր ենք համարում մի քանի պիտի խոսել արհեստագործների միաբանացութեան խօսք սակ արհեստագործների միաբանացութեան մասին:

I.

Հայ արհեստագործների միութեանց ծագումը անհետանում է դարերի հնութիւնների մէջ: Արհեստագործներից ոչ ոք չը կարողացաւ բացատրել թէ երբ և ինչպէս է եղել էստաֆների ծագումը, միայն թէ բոլորն ևս համաձայնօրէն ասում են, որ համայնական կարգերը շատ հին են: Անշուշտ

1) Հեւ թագաւորաց օրդի նորա (այսինքն Օրհանայ) սուլթան Մուրադ Ա... և երկու Անատոլիա տիրեաց բազում տեղերաց (Պատմ. Հայոց. ջաւհան. հատ. Գ. երես 304):

1) Այդ այն ժամանակն էր, երբ լինում VI դա՛հից զրկված, օգնութիւն էր լինում Եւրօպայի թագաւորներից:

վորարար այս և այն էֆէնդուց, այս և այն վաճառականից կարողութեամբ մարդիկ են, և ամեն մի քայլափոխում շողորմորթում են գործը անսխալաբանութեամբ, ըստ հարուստների, և զիրք ունեցող, բայց անպայման ցեղերին....

Հարցնում ենք, ինչպէս կարող է մի այդպիսի երկրում գաղափարը, հասարակական դրոշմը, կամ որ և է հասարակական ձգտումը իր ետևից քաշել, տանել ժողովուրդը, երբ հենց այդ գաղափարին և հասարակական գործին նուիրված մարդիկ իրանք քաշ են դալիս սարուկ ժողովրդի ետևից և լիզում կեղտոտ ձեռքերը....

Խ. Մ.

ԳԱՆՈՒՍԱԿԱՆ ԻՆՏԵՆՏԻՎԻՅԱՆ

Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսը հարուստ է ինտելիգենտներով, բայց սրանցից 20⁰/0 չէ՛ դառնում հասարակական գործերով, նրանք ամենքն իրանց համար են։ Հասարակական գործով զբաղվող ինտելիգենտներն էլ չեն աշխատում միմեանց վրա իշխել, այլ ուզում են, որ գործերը բաժանեն իրար մէջ, որպէս զի գործն աւելի ոյժով աւաջ գնայ, իսկ եթէ պէտք է լինում խմբական գործունէութեան, նրանք իրանցից միմեան ընտրում են ղեկավարող և խմբում են նրա շուրջը։ Այդպէս էլ գաւառներում. այստեղ մենք ուրիշ բան ենք նկատում։

Միևեւում—գաւառներում՝ իրան ինտելիգենտ, կրթված մարդ է համարում ամեն մի տեղից վեր կենողը և ինչէր առես, որ չէ անում Գլխուք մի վաճառական, որ պտտել է Ռուսաստանը առետրական նպատակով, նա արդէն լուսաւորվել է, խելք է. այդ ցոյց տալու համար նա մի քանի նորաձեւութիւններ է մոցնում իր նիստ ու կացի մէջ. վաճառականական հին մեթոդի փոխարէն վարվում է նոր մեթոդով—լաւ մաղաղկն է բաց անում, պարտք ու վարկանք է բերում, խաւովի ձակաւոր մակագիր է կոչնում և իսկոյն աղգանում ՕԵԵ վերջացնում... Գիւս չը վերջացաւ. նա խանութի ներսը կոչնում է «ԵՅ ԿՐԵԴԻՏԷ ՆԻԿՈՄՍ» յայտարարելով, թէ և դա ձեռի համար միայն։ Նա ապրանքների արժէքի վրա 30—50—60⁰/0 աւելացնելով, առանց սակարկութեան՝ ուղում է վաճառել, իսկ սակարկող զիւղացուն բերել, յիմար, անքաղաքակրթ անուանում են իր սովորած մի քանի ֆրանկերով որոշ չըրջան ձեռք բերելով, սկսում է իր դաղանի միջև նայութիւնները, որոնց աւելի վարժվել է ճանաչարհորդութեան ժամանակ, կամ մի քանի կտոր զիւր կարգադրել։

Այդպիսի վաճառականը համարվում է ինտելիգենտ, դարգացած, կրթված։

Որովհետեւ զարգացած է, իրան իրաւունք է համարում ամեն գործի ղեկավարող հանդիսա-

նալ։ Գլխը դպրոց չունի, նա աշխատում է զուրկութեամբ, գովելի ձգտում, բայց արի տես, որ նրա նպատակն ուրիշ է. նա հրաւիրում է մի ուսուցիչ, որ աջակցի լինի իր մեքենայութիւններին, որ իրան քննի և հաշակի որպէս ամենախելոք մարդ։ Նա դրանով չէ բաւականանում, այլ աշխատում է հասարակական փող ձեռք բերել և ահա ընտրվում է երեցիության, եկեղեցու փողը տարիներով մնում է իր խանութում, շահվում է իր համար... Նա բարեբարութիւն է անում մոտակայ գիւղացիներին փող կամ ապրանք պարտք տալով և մի քանի տարուց յետոյ ահագին բազմութեամբ ճորտեր է ունենում։ Եթէ աշխարհը փոխվում է և հրապարակ է դալիս հասարակական շահերին անձուկէր մէկը, որը ըննադատում է մեր ինտելիգենտի գործունէութիւնը, ցոյց է տալիս նրա սխալ ընթացքը, հրաւիրում է իսկական ճանապարհով գնալ, մեր ինտելիգենտ վաճառականի հայելին չէ դալիս, այդպիսիներին վերանայար է համարում և սկսում է պարսաւել նրան, անուանարկել և վաճառել։ Եթէ այդ գործիչը ձեռնարկում է մի որ և է հասարակական գործի, վստահանալով միայն իր ոյժերի վրա, դրա առաջին խոնդոտն իրան խելք հաշակողն է լինում, ամեն մի միջոցի դիմում է ուրիշի սկսած գործը, որի նախաձեռնող լինքը չէ հանդիսացել, ոչնչացնել, որպէս զի ինքը փայլի որ ուրիշները, գործին անձանդները կարծեն թէ առանց նրա ոչինչ չի գլուխ դալ։

Մենք օրինակ բերինք վաճառականին, որին կարելի է ներել, որովհետեւ նա իր հաշի տեսակետից է նայում ամեն գործի վրա։ Բայց ինչ կասէք, որ նոյն տեսակ են վարվում և ուսուցիչները, և բժիշկները, և ծառայող ինտելիգենտները։

Մենք շատ փառսեր ունենք. անձամբ առիթ ենք ունեցել այդպիսի գաւառական ինտելիգենտներին հետ գործ ունենալ և միշտ նկատել ենք, որ ամեն միքն ձգտում է ցոյց տալ, որ առանց իրան գործը զուլու չի դալ, իսկ այդ ապացուցանելու համար ամեն միջոցները դիմում է։ Առանց այն էլ գաւառներում ինտելիգենտներին մատուցելու կարելի է համարել, նրանք էլ ուղում են իրար վրա իշխել, իրար ստրկացնել։

Ինչ կարելի է սպասել այդպիսի իրար չըղբացնող ոյժերից, ոչինչ։ Մասուլի մէջ միշտ մատնանցում են անում գաւառական ինտելիգենտի վրա և յոյս ունեն, որ նա կը լինի մասուլի՝ դադարները հասարակութեան մէջ տարածողը, որ նա կաշխատի օգնել կարևոր դէպքում և հեռու նստած մարդիկ չը դիտեն թէ մեր մէկ ու կէս ինտելիգենտների մէջ չորս կուսակցութիւն կայ։

Ինչն է ստիպում դրանց այդպէս վարվել. արդե՞ր չափազանց ետակամութիւնը, գործից հասարակութիւն չունենալը, թէ կատարեալ սղի-

տութիւնը, մենք չը դիտենք։ Միայն հրապարակել վրա է տխուր փաստը։

Չենք համարձակվում խորհուրդներ տալ, այդ նրանց կը վերադարձնենք. նրանք fi done! կասեն ու կանցնեն։

Նրանց սխալ ճանապարհից հանելու համար խորհուրդներ տալն ու մտախելը թողնում ենք մասուլի ղեկավարներին—խմբագիրներին, նրանք ոչ մի միջոց չը պիտի խնայեն իրանց նշտարը խրել թարախալի վէրքի մէջ, որը նկարագրում է գաւառական թղթակիցը։

Բ. Մ.

ՆԱՄԱԿ ԳԵՅՐՈՒՈՒՅ

Մայիսի 29-ին

Գլխուք գլխը գտնվում է վաղարշապատից 17—18 վերստ հեռավորութեան վրա։ Այս գլխուք ունի մօտ 400 տուն հայ բնակիչներ, որոնց պարագլուխը զլխաւորապէս երկրագործութիւնն է, որից ստանում են առատ ցորեն, գարի, բամբակ և դանաղան բոյսեր։ Գլխուք գլխը մինչև 1869 թիւը չունէր ուսումնարան, 70-ական թվականներից սկսած, ժողովուրդը տեղական թաղէտ քահանայ Մէլիք-Ղալաբախցի առաջնորդութեամբ, ձեռնարկեց շինել եկեղեցու գաւթում մի շինութիւն եկեղեցական ծխական մի-դասնան ուսումնարանի համար և երկու տարուց յետոյ արդէն պատրաստ էր։ Ուրեմն 1872 թվականից սկսած մինչև 74 թիւը գլխութիւն կանոնաւոր դաս էր լինում այս ուսումնարանում, իսկ նրանից յետոյ—Երեմիայէս, այսինքն մի գլխական լապիֆա հաւաքելով 20—30 երեխայ, դաս էր աւանդում հին ձեռով, այսինքն ժամագիրք, սաղմոս, կտակարան և ուրիշ այդպիսի գրքեր, որոնցից գլխացի խելք մասնակները ոչ կարող էին օգուտ քաղել և ոչինչ էլ չէին հասկանում։

Բայց վերջն այսպէս չանցաւ. 1887 թիւ սեպտեմբեր ամսի 15-ից սկսած կանոնաւոր դասեր են լինում այս ուսումնարանում, որտեղ և սովորում են զանազան զիւղերից և մի և նոյն գիւղից շատ հայ մասուլիներ. բայց յուսալին այն է, որ աղէտ և ուսման ճաշակից զուրկ ծրնողները չեն թողնում իրանց որդիք սովորել մինչև տարվայ վերջը, այսինքն ձմեռվայ 3—4 ամիսը սովորում են, բայց հենց որ դարձն բացվում է, իւրաքանչիւր մարդ սկսում է իր որդուն հանել դպրոցից ասելով՝ «է՛հ, բաւական է որքան սովորել են մինչև այժմ, մի երկու ամսում հօ նոր վարդապետ չը պիտի դառնան»։ Այսպէս ահա խելք մանուկները, ամառը և աշնանը այդ դաշտում, արևի կիզող ճառագայթների տակ անասուն պահելով և կամ նոյն իսկ գիւղի փողոցներում թափառելով, կորցնում

են իրանց մի քանի ամսվայ աշխատութիւնը և այս բոլոր թշուառութիւնների պատճառը տղան ծրնողներն են, որոնք գտնվում են խաւար և ամեն նաանախանգիլ գրութեան մէջ և շատ հեռու են գտնվում գրութեան լուսաւոր հորիզոնից։ Գլխուք գլխուք ուսումնարանը զուրկ է և նիւթական միջոցներից, որով կարելի էր, ի հարկէ, աւելի բարձր դրութեան մէջ պահել ուսումնարանը։ Այս ուսումնարանը չունէր մինչև այժմ և գրագարան, որով կարելի լինէր բոլոր սերունդները հայ մանկանց մատաղ սրտում, բայց 1890/91 թ. տեղական ուսուցիչ պ. Յակոբ Սառիկիանցի աշխատութեամբ, բացվեց մի փոքրիկ գրադարան, որին մեծ դարկ տուեց այրի Աննա Մէլիք-Գալաբախ, ուղարկելով իր հանգուցեալ ամուսնու համարեալ բոլոր լոյս տեսած գրքերը. յոյս ունենք, որ այրին օրինակ կը դառնայ մեր հայ հասարակութեանը...

Գ. Շ. Մ.

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱՍՏԱՅԻՅ

Յունիսի 3-ին

Այս գլխուք բնակվում են երկու աղգուլիւններ հայեր, որոնք զբաղվում են հողագործութեամբ և ոչխարապահութեամբ և կաղում են 200 տուն, և մալախներ, որոնց զլխաւոր պառագլուխը է սայլապանութիւն (Ֆուրգոնչիլիկ) թիւն և հողագործութիւն, որոնց թիւը բաղկացած է 50 ընտանիքներից միայն։ Այդ երկու համագլխացի աղգուլիւնները, որոնք կաղում են ջուկ ջուկ հասարակութիւններ, բաժանված են միմեանցից մի կամուրջով միայն, որի արեւմտեան կողմը հարկ տարածութեան վրա ընկած է ուսուցան, այն է մալականների մասը, իսկ արեւելեան կողմում, մի զառիվարում, գտնվում է հայերի մասը, որի չլիպպատում տեղ-տեղ աղբի են ընկնում ժայռապատ բլրաներ և քարախոյտեր, որոնց կողքով էլ անմաքուր առուակ տխուր կերպով հոսում է դէպի Զանգուզ գետը։

Չը նայած, որ հայերը մալականներից 10—15 տարի առաջ են հիմնել այս գլխուք, սակայն նրանք չեն ունեցել այնքան գիտակցութիւն, այնքան հեռատեսութիւն, որ իրանց բնակարանները չլինէին այն տափաքանում, որն այժմ պատկանում է մալականներին, այլ նրանք, հայերը, հետեւելով իրանց պապերի սովորութիւններին, որոնք սկսում են եղիլ բնակվել անհոգ, ձորերի և քարախոյտերի միջակայքներում, ընտրել են այդ քարաքանտ, խորհուրդ տեղը՝ տներ կառուցանելու համար։

Եթէ համեմատելու լինենք հայերի և մալականների տնտեսական դրութիւնը, նրանց առօրեայ կեանքի հանգամանքները և հողագործական գործունէութեան պայմանները կը գտնենք ա-

էին միմեանցից, թէ և շատ անգամ սակաւթիւ լինելու պատճառով այդ ճիւղաւորութիւնները ունենում էին մի ընդհանուր ուստաբաշի։ Խոտիւ կարելիւմ էր մէկին միւսի գործը կատարել, կրկնել չէր կարող նոյն իսկ կարկանդակ ձգել մի պղնձէ ամանի, իսկ պղնձագործը իրաւունք չունէր մի աման կլեկել։ Այդ կարգի դէմ դանդաղ գտնվող վարպետը ենթարկվում էր պատժի։ Ահա թէ ինչ արհեստներ կային Երզրումում։

ա) Երկաթագործներ. 1) Նալճի (պայտեր չիւնող), 2) Նալչաճի (կօշիկ պայտ չիւնող), 3) Միսճի, 4) Գամուրչի (դարբին), 5) Բաշմաճի (նուրբ երկաթեայ օղակներ, շղթաներ չիւնող), 6) փակա-նալործ և 7) Նալբանդ։ Առաջին վեց ճիւղերի նախահայրը համարվում էր Գաւիթ մարգարէն, իսկ վերջինին՝ Յոթէճ։

բ) Փայտաշէններ. 1) Հիւսն. 2) Մառանկող (այժմեան ատաղձագործը), 3) Չիրլիսճի (ճախարակագործ—տոկար), 4) Տարաղճի (սանր չիւնող և 5) Մառանճի (սալի անիւր չիւնող)։ Սրանց նախահայրը համարվում էր Յոթիսի ատուածահայրը։

գ) Ձինագործներ. 1) Ղաւճի (թուր և խնչալ չիւնող), 2) Չալմախճի (հրացանի ոտը չիւնող), 3) Լուլաճի (հրացանի փողը չիւնող) և 4) Ղօն-դախճի (հրացանի կոթը չիւնող)։ Սրանց հետ պէտք է հաշուել և բիշախճիներին, որոնք հասարակ զանախներ էին չիւնում։ Սրանց նախահայրը համարվում է Յոթիսի Օձնեցին։

դ) Պղնձագործներ. 1) Ղաւանճի (պղնձագործ), 2) Բէլէճի (սրանք հին ամանները կամ պղնձի հանածոյն (руда) հալելով ծախում էին), 3) Կլեկ-ճի։ Սրանց նախահայրը՝ Յոթէճ։

ե) Ուտաման կարողներ (թիւրիճիք)։ Ճիւղաճի, (հին տեսակի կոպիտ կօշիկ էր, որի դիւլն դուրս տեսողը համարում էին կանայք, իսկ կարմիր սեկից կարածը այժմս էլ հաղւում միւս քողերը), 2) Մամանճի, 3) Մէսճի, 4) Բապուճճի (չիշկակար), 5) Կօնուրաճի (կիսակօշիկ նման ատանաման) և 6) Եքսիճի (կարկառողներ)։ Սրանց նախահայրը Նիլա մարգարէն։

զ) Կաշեգործներ. 1. Սառաջ (կաշեղէն չիւնող), 2. Ղալմախճի (թամբ չիւնող), 3. Չարմաճի (տըրեխ պատրաստող)։ Սրանց թւում պէտք է հաշուել և խաղաղորդներին ու քրիշէններին (չար չիւնող)։ Սրանց նախահայրը դարձեալ Նիլան էր 1)։

է) Գերեզներ. 1. Այրիական դերձակ, 2. Նուրպական դերձակ, 3. Թէհրիճի (սեկիթիւ բանաւածներով կարող) և 4. Արաճի (չալեղէն կարող)։ Նախահայրը՝ Նիսիճ։

ը) Մետաքսագործներ. 1. Ղաղաղ, 2. Բիւբիւ-ճի և Ղալմախճի (թէլ ոլորող և ժապաւէն գործող)։ Սրանց նախահայրն էր Յոթ։

թ) 1. Ջուրճի (խուսագործ), 2. Լհրամճի, 3. Մանիսաճի (մանիսայ, սփածանիք, բրդոտ և ընտրութիւններ և այլն գործող)։ Նախահայրը՝ Նոյնիս։

ժ) 1. Բիւբիւճի (թանգալին մօրթիւններից մուշտակ կարող), 2. Բիւսաւճի (ոչխարի մօրթուց կարած մուշտակ, որի երեսը կարմիր ներկում են կօշայով)։

ձ) 1. Նալմաճի (որմնաղբ), 2. տալճի (քարտաշ) և 3. Սլեւաճի (պատերը ձեւող)։

1) Տրեխ չիւնող մի ձեռնիկ վարպետ ինձ ասեց, որ իրանց նախահայրը համարվում էր բացի Նիլա մարգարէից և Սուրբ-Կարապետից։

Ժ) Հացագործ (այստեղ համարում են նախահայր՝ հայր Արքանալին—տաճկիները՝ Արուսէք-րին)։

Ի) 1. Թեօքմէճի (դիւղի պղնձից պարակներ չիւնող), 2. Ղարաղայիւճի (թիւրից և արճից մատանիք և այլ առարկաներ է չիւնում)։

Լ) 1. Թէնէճի (թիւրիւնագործ), 2. Սօպաճի (թիւրիւնայ վառարան չիւնող)։

Լ) Մաղաղործներ. 1. Մաղման (այծի մաղը մանող), 2. Մուլմաֆ (նոյն մաղից խարարներ, պարաններ և այլն պատրաստող)։

Լ) 1. Ոսկերիչ, 2. Ղալմաղ (քանդակող)։ Սրանց նախահայրը՝ Բիսիլիէ 2)։

Լ) 1. Բիւրմաճի (աղիւսագործ), 2. Բիւրմէճի (կիր պատրաստող)։

Լ) 1. Բրուտ, 2. Թոնիւր չիւնող։

Լ) Չիթի (կտաւ և եղանակ դաշող)։

Լ) Սալիւրի։ Սրանց նախահայրը՝ Միլիթիսի (տաճկիւն կուլում են Սալմանի փաթ)։

Լ) Հալաճ (քամակ դող)։

Լ) Նուաքածուներ (միայն աշուղներ)։ Նախահայրը՝ Յոթնաղ։

Լ) 1. Մաղործ, 2. Մոմ թափող (նախահայրը ումանց կարծիքով՝ Աբէլ, միւսների կարծիքով, Նոյ 3)։

Լ) Լիվէնճի (թելերը գոյնազոյն ներկող 4)։

2) Խարայէլացոց վրայութեան խորանը։

3) Արաղապարում ինձ ասել էին Տ. Արքանալի մասին. տես 1888 թիւ «Մշակի» 134 համարում «Հայ արհեստագործների համայնական կարգերը» վերնագրով յօդուածը։

4) Սրանց չը պէտք է չիլիթիլ բոյնածոց հետ, որոնք լիզակով էին միայն ներկում Երզրումում

Լ) Նախաքար (маларъ)։

Լ) Սրճագործ։ Նախահայրը՝ տաճկաց բառով մի ինչ որ չէիս Սաղրի։

Լ) Լուլաճի։

Լ) Չիթիսճի։

Լ) Մէհանաճիներ. զինվածաւորների նախահայրը՝ Նոյ, օղիվաճառներին՝ Արիստոտէլ։

Լ) Սապոնճի (օճառագործ)։

Լ) Ֆէսճի։

Լ) 1. Փալանճի (բեռնակիր ձիու համար խտից չիւնած թամբ), 2. Կէմէրճի (նոյն թամբը չիւնող միայն փայտերից)։

Բացի սրանցից կային քէշէճիներ (թաղիքագործ) ժամագործներ, ջրկիրներ, համալներ, ծխափողագործներ, կաղմարարներ, չիւսաճիներ (շալիլ չիւնող և ապակի գցող), աշճիներ (կերակուր և փողներ), բալիկարներ, մանրավաճառներ, քալաֆտարներ (խոտ, դարի և դարման ծախողներ) դափաֆներ (պատրաստի ոտնաման ծախողներ) ճոթածախներ և վաճառականներ։ Վերջինիս ճոթիւն էին ծախում գումարով և ունէին իրանց թրճաքայլին (վաճառականապետ)։ Մաղաղործ հայ բօլաններն ունէին իրանց ատանճին իւղաքչին։ Ինչպէս տեսանք—առևտրականներն և ունէին ատանճին Լսնաֆ նոյն պաշտօնական անձինքներով ինչպէս և արհեստագործներն մէջ։

(Կը չարունակվի)

մի ներկատուն միայն կար, և այն՝ կառավարութիւնը կապալով էր տալիս։ Այդտեղ բանորդների դատը մարմնաւոր իշխանութեան դատարանում էր քննվում։

հայրն զանազանութիւնս Բայց նպատակ հոգնեալ
նախ քան անգամ մի ընդարձակ տեսութիւն ա-
նկող այդ երկու հարեան ազգութիւններն կհանրի
և այլ հանգամանքներ մասին, մենք առաջով
մի խօսքը կը մասնաւորինք հետեւեալ մի քանի
կէտերով լրտա:

Ներքին-Արտաքին հայերը, որոնք, ինչպէս ա-
նցիկ 15 տարի առաջ են հիմնել այս գիւղը
քան թէ մայրականները, դեռ եւս բնակչութիւն
նոյն նահապետական ձեւի ողորմելի խրճիթ-
ներով (բացի 2-3 ընտանիքից), որոնք չինկո
են սրանց 60 տարի առաջ, երբ նրանք տաճ-
կաց սահմանից գաղթել են դէպի ռուսաց երկի-
րը: Այն ինչ մայրականները կենում են փայտաշէն
և սրբաւար քարերից կառուցված շքեղ տներում:
Նրանց երկու յարկանի բնակարանները, որոնք
ծածկված են կղմնաքարով և տախտակով, փայլում
են յայտնի գեղեցկութեամբ, նախանձ ազդելով
չափերին: Նրանց ֆուրգոնները գերազանցում
են հայերի ծանրաշարժ սայլերին, արագընթաց
ձիաները՝ համարազայ գոմէշներին ու եղներին:
Նրանց երկրագործական այլ և այլ նորաձեղ գոր-
ծիքները նոյնպէս աւելի կանոնաւոր են, քան թէ
հայերի վաղմուտ, պաշտնական հասձն գործիքնե-
րը: Վերջապէս մայրականները նիստ ու կացը,
ընտանեկան կառավարութիւնը, մաքուր հագնե-
լիքը և այլ այսպիսի կենանքի հանգամանքները
զգալի կը ըստ իր զանազանութիւն են հայերից
և աչքին են ընկնում իրանց բաւարար դրու-
թեամբ...

Մայրական հասարակութիւնը, հողագործական
գործունէութեան տեսակետից, քայլ առ քայլ
հետեւում է ժամանակակից պահանջներին և միշտ
գրեթէ աջողութիւն է գտնում: Այդ երևում է
նրանց, որ մայրականները բացառապէս գինեւ
նոր սխտամի երկաթէ գոթաններ, որոնք թիւ
թիւ կանոնաւոր պատճառով բանեցվում են 2-3
զոյգ թիւաներով (մինչդեռ հայերի գոթանները
6-7 զոյգ թիւաներով հազել են տեղից չարժ-
ւում): Այն ինչ հայերը թէպէտ հրապարակում են
և փափաղում նոյնպէս ձեռք բերել այդպիսի եր-
կաթէ թիւեկ գոթաններ, բայց և այնպէս դեռ
ես չեն վստահանում գինեւ: Ինչու... որովհետեւ
նոր սխտամի է. ուրեմն և հայերը սովոր չեն
նոր աճուած թիւն մտնել իրանց այլ և այլ
պարագմունքներում...

Մայրականներից շատերը, չը բաւականանալով
նրանով, որ սրանցիկ մի քանի տարի առաջ գինեւ
էին այդ նոր ձեւի գոթանները, և մինչև այս
տարի բանեցնում էին, այս գարնանը կրկին այն-
գամ գինեւ այդ գոթաններից, որովհետեւ համ
ձեւափոխել և աւելի թիւեկացել են, համ էլ դու-
րան շինողները կամ ծախողները բարի են եղել
նոյն իսկ ապառիկ թողնել դրանց արժէքը Ժող-
ովրդ վրա այն պայմանով, որ մի քանի ամիսից
կտայ գինեւները միջոց ունենան վճարելու իրանց
առած գոթանների գինը: Գոթանները ապառիկ
սովորում են, ինչպէս մայրականներին, նոյնպէս և
հայերին, միայն եթէ վերջիններս կամենային
գինեւ իսկ գինեւ, պէտք է անած, չափաւոր են
նշանակված, այն է 45-50 և 55 բուրջի, այն-
պէս որ խրաբանչիւր կանոնաւոր վարուցանք ու-
նեցող գիւղացի կարող է ձեռք բերել մի գու-
թան և միայնակ, առանց ուրիշի օգնութեան,
2-3 զոյգ թիւաներով բանեցնել:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շուրթ Թիֆլիսում անտանելի է դառնում: Յու-
նիկ 10-ին և 11-ին, ժամը 3-ից մինչև 5 կէս-
րեց յետոյ, արեգակի տակ շորը հասնում էր
Ռոսիերի ջերմաչափով 40 աստիճանին: Եւ դար-
ձաւ փողոցները չին ջրով, քանի որ մեր քա-
ղաքի երեսիկ ջրանցքը ոչ թէ միայն փողոցները
չիւրս համար բաւականաչափ ջուր չունի, բայց
և երկու կայ թէ մի քանի օրեց յետոյ բաւակա-
նաչափ ջուր չենք ունենայ խմելու համար ան-
գամ:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտարա-
րել է մեկ հետեւեալ տակ ևս յունիսի 12-ից
մինչև նոր կարգադրութիւն, տուարի մի ֆուն-
տը, առաջին տեսակի, արժէ 8 կոպէկ, սուկի
14 կոպէկ, ոչխարի մի ֆունտը 8 կոպէկ:

Պ. Յ. Մէլք-Բախտամյան խնդրում է մեզ
սպարկել հետեւեալ յայտարարութիւնը. «Ուսանո-
ղական սուղ ժամանակ չը ներկելով ինձ առան-

ձին առանձին պատասխանել այն նամակներին,
որոնցով զանազան անձինք տեղեկութիւն էին
խնդրում ինձանից գիւղատնտեսական զանազան
գաղութներին վերաբերմամբ, այժմ Թիֆլիս հետա-
բերած լինելով Փրանսիական գիւղատնտեսական
գործիքէ բոլոր գաղութներին ծրագրերը, յայտնում
եմ ցանկացողներին, որ նրանք կարող են գիւմը
ինձ, հարկաւոր բացառութիւնները ստանալու
համար թէ ուսումնարանների ծրագրերին, թէ
ուսումնարան մտնելու պայմաններին և թէ ուսա-
նողական ապրուստի մասին: Հասցէս. Թիֆլիս,
Օրբելեան փողոց, նախկին հեռագրատան մօտ,
տուն Նաղդիբովի:

Որովհետեւ Թիֆլիսի ջրանցքը բաւականաչափ
ջուր չունի, նախկին կորցնում է ջրանցքն էլ այս
ջուրը սկսել է բանել և կուր գետի ջուրը մա-
տակարարել քաղաքին: Իսկ Հաւաքար ասված
թաղում թոյլատրված է բնակչներին կրել ջուրը
ուղղակի կուր գետից:

Ծնորակալութեամբ ստացանք բժշկական
Գրիգոր Տէր-Գրիգորեանի (Թիֆլիսցի) «Հանրա-
մատչելի բժշկարան» վերնագրով դրքի առաջին
հատորի առաջին տետրակը: Այդ տետրակը պա-
րունակում է հետեւեալ յօդուածները. 1) միկրո-
սկոպ, 2) նախապաշտպանողական միջոցներ, 3)
բուրժէ, 4) կարմուռ, 5) կեղծ կարմուռ, 6)
ծաղիկ, 7) ծաղիկ պատուաստումը, 8) ջրածա-
ղիկ, 9) կարմիր քամի, և 10) բժուոր տիֆ:
Տետրակն արժէ 70 կոպէկ: Պէտք է խոստովան-
վել, որ դրքերը կարգացվում է հետաքրքրու-
թեամբ և վատ չէ կազմված, բայց վերնագրերը
համապատասխան չէ բովանդակութեան: Իսկա-
պէս դրքը կրում է երկու վերնագրեր. և երկ-
րորդ վերնագրերը աւելի յարմար է դրքի բովան-
դակութեան, այն է «Առողջապահութեան և բժ-
շկականութեան հարցերին վերաբերեալ հանրա-
մատչելի գրություն»: Այս, զա բժշկարան չէ, այլ
դրոցներ են... Ինչ որ վերաբերում է բժշկական
Տէր-Գրիգորեանի լեզուին, մենք տեղ տեղ ծանր
ենք գտնում լեզուն և կարծում ենք, որ աւելի
լաւ կը լինէր, վրոխանակ հայերէն նոր տեխնի-
կան բառեր նշարելու, որոնք շատ անգամ ան-
յարմար կերպով են հնարվում, գործածել ուղղա-
կի եւրոպական գիտութեան մէջ ընդհանրապէս
ընդունված տեխնիկական բառեր: Օրինակ աւելի
լաւ չէ գործածել օրգանիզմ բառը, քան թէ
գործածել արանաւոր մարմին անյարմար կերպով
կազմված և ոչինչ իմաստ չը պարունակող
բառը: Այդ տեսակ բառերով էլ է դրքերը
և ցանկալի կը լինէր, որ հետեւեալ տետրակնե-
րում այլ ևս չը պատահէին այդ տեսակ բառեր:
Ինչ և ինչ բժ. Տէր-Գրիգորեանի գրքը բաւական
լաւ է կազմված, և քանի ընթերցողը շարունակ-
կում է կարգալ գրքերը, հետզհետէ սկսում է հե-
տաքրքրվել նրա բովանդակութեամբ: Սակայն
մենք այդ տեսակ գրքեր օգտակար ենք գտնում
ոչ թէ որպէս բժշկաւոր անհեւր, այլ որպէս լոկ
ընթերցանութեան գրքեր:

Թիֆլիսի առաջին դիմադրայի աշակերտների
հարցաքննութիւնները վերջացան յունիսի 11-ին:
Այս տարի աւարտելին դիմադրական ուսումը
հասունութեան վկայականով 27 հոգի աշակերտ-
ներ, որոնցից 3 հոգի վարձատրվեցան մեղա-
ներով: Մալիշիսկի (ռուս) և Շահբուլազով (հայ)
ստացան ունի մեդալներ, իսկ Կորշ (ռուս) ստա-
ցաւ արծաթէ մեդալ:

Լրագիրները լսել են, որ Պարսից կառավարու-
թիւնը զիտաւորութիւն ունի Ռուսաստանից դաշ-
թող հրեաներին Պարսկաստանում բնակեցնել:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի այգեգործա-
կան դպրոցի վարչութիւնը կառուցանում է նոր
ննջարան՝ 50 աշակերտների համար, ուրեմն վարչու-
թիւնն այդպիսով որոշում է մօտաւորապէս, որ ա-
յաջապէս աշակերտներին թիւը դրանից աւելի
չը պէտք է լինի: Գա մի անհետաւոր քայլ է
վարչութեան կողմից, որովհետեւ, ինչքան մեզ
յայտնի է, այդ դպրոցը մտնել ցանկացողների
թիւը տարուց տարի շատ աւելանալու է:

Մեզ հաղորդում են, որ այն փոքրիկ մասնա-
խումբը, որը ընտրված էր մի գումար հաւաքելու
առաջիկայ տարին հայոց թատրոնին նպաստելու
համար, մինչև այժմ հանգամանակ է մօտ 1800
բուրջի:

Է. ՄԱՐԻԱՆՈՅԻՑ մեզ գրում են, «Հանգուցեալ կա-

թողիկոսի փողերը գոգանալու գործի պաշտօնա-
կան քննութիւնն աւարտված է: Այդ քննութեան
հետեւանքները յիշանի նահանգական դատարանի
պրօկուրօրը հաղորդել է Թիֆլիսի դատաստանա-
կան պալատի պրօկուրօրին: Շուտով, ինչպէս ե-
րևում է, մի որոշ վճիռ կը կայացնվի այդ գոր-
ծի առիթով:

Քաղաքում, մի քանի շրջաններում լուրեր են
պտտում, որ իբրեւ թէ Թիֆլիսի նախկին քաղա-
քապետ, Ալեքսանդր Մատինով, Աստրախանում
հիւանդացի և վաճանակել է: Հարկաւոր ենք հա-
մարում յայտնել, որ այդ լուրը հիմնովին սուտ
է, և անկասկած Թիֆլիսի չլուրեր մօզոնողներին
երևակայութեան անմիա ծնունդ:

«Ноб. Ообщ.» լրագիրը գրում է, որ հայոց
հասարակութեան մէջ օրվայ հարցը կաթողիկո-
սական թեկնածուների անունների խնդիրն է:
Շատերը, աւելացնում է լրագիրը, խօսում են
Արիստակէս Ապիսկոպոս Սեդրակեանի մասին,
որը թեմական առաջնորդ էր Թիֆլիսում: Լա-
գիրը լսել է, որ օրագրանի թեկնածուութիւնը
պաշտպանում են և թիւրքահայերն էլ:

Պ. Լ. Պավլենով «Историч. Вѣстн.» ամսա-
գրում ահա քանի տարի է, որ տպում է հետաքր-
քել տեղեկութիւններ Ռուսաստանում հրատա-
րակվող գրքերի և պարբերական հրատարակու-
թիւնների մասին: Այդ տեղեկութիւններից երե-
ւում է, որ 1890 թվին ամբողջ Ռուսաստանում,
բացի Ֆինլանդիայից, տպված են եղել 8,638 զա-
նազան հեղինակութիւններ 24,988,721 օրինա-
կով: Ռուսերէն լեզուով տպված են եղել 6,262
հեղինակութիւններ 18,353,126 օրինակով: Մնա-
ցած 2,376 հեղինակութիւնները 6,635,595 օրի-
նակով ընկնում են 31 այլազգի գրականութեան
վրա հետեւեալ կերպով.

Լեհերէն 791 հեղինակութիւն, 2,081,456 օրինակ.	
Հրեերէն 451 — 1,124,985 —	
Գերման. 341 — 634,529 —	
Լատիշ. 215 — 681,630 —	
Լատվ. 159 — 729,454 —	
Հայերէն 102 — 167,818 —	
Ֆրանս. 76 — 45,005 —	
Վրաց. 58 — 113,608 —	

Յօդուածագիրը դանդաղում է, որ այլազգիները,
մասնաւոր լեհացիք և գերմանացիք բոլորովին
չեն զբաղվում ռուս գրականութեամբ և պատ-
մութեամբ. գրքեր ամենից շատ հրատարակվում
են Պետերբուրգում, այնուհետեւ Մոսկվայում,
Վարշավայում, Կազանում և այլն. Թիֆլիսը 9-որդ
տեղն է բռնում: Թիֆլիսում 1890 թվ. ընթաց-
քում հրատարակվել են 114 ռուս և 131 այլազ-
գի գրքեր: Առ 1-ին յունիսի 1891 թվ. ամբողջ
Ռուսաստանում, բացի Ֆինլանդիայից, հրատա-
րակվում են եղել 109 քաղաքներում 694 պարբե-
րական հրատարակութիւններ, որոնցից միայն
337 հրատարակում են եղել մասնաւոր անձինք,
իսկ մնացած 375 եղել են կառավարչական, ու-
սումնական և ուրիշ հասարակական հիմնարկու-
թիւնների հրատարակութիւններ, ընդհանուր թիւը
512 հրատարակութիւններ եղել են ռուսերէն,
70 լեհերէն, 47 գերմաներէն, 12 էստոներէն, 8
ֆրանսերէն, 6 հայերէն, 5 վրացերէն և այլն. յի-
շեալ թիւը իրանց գրողութիւնը իսպառ զաղարե-
ցրել են 31 հրատարակութիւններ և իրաւունք է
տրված նորից հրատարակելու միայն 36 հրատա-
րակութիւններին, որոնք բոլորն էլ բացի մէկից
(չեհերէնից), ռուսերէն են:

ՄՍՍԱՎԱՅԻՑ մեզ գրում են, «Երեկ, ամիս
5-ին, այստեղից հեռագրից Պոլսի «Արեւել» լրա-
գրի խմբագրութեամբ, որ Մոսկվայի հայոց կո-
միտայի կողմից յիսուս բուրժուանոց ծաղիկայ պը-
նակ զինն Ալեքսանդր Պարսկի վրա: Կերակրել
ամիս 9-ին, այստեղի հայոց եկեղեցում հօգե-
հանգիստ կը կատարեն Թէ հայ և թէ ռուս հա-
սարակութեանը տաղանդաւոր դերասանի մահը
մեծ ցաւ պատճառեց: Յայտնվում է, որ Ալե-
մանին այստեղի ռուս հասարակութիւնն աւելի
է ճանաչում և սիրում, քան կարելի էր կարծել:

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լուրջօրի շրջաններում խօսք կայ որ Ռէլիսի
պրինցը զիտաւորութիւն ունի հրաժարվել իր
դահական իրաւունքներից իր աւագ որդու օգ-
տին:

— Լրագիրները հաղորդում են, որ իշխան Բիս-
մարկ նորից հիւանդացել է իր վաղմուտ հիւան-
դութեամբ, չղային ցաւով:

— Անգլիական «Standard» լրագիրը հաղորդում
է, որ գերմանական նաւատորմը յունիս ամիսին
կուղեւորվի դէպի Միջերկրական ծովը:

— Բէրլինց հեռագրում են, որ շվեյցարական
աղագիրն խորհուրդը վճռել է հետեւեալ դիմորդնե-
րի մի նոր զորաբաժին կազմել:

— Լիւն քաղաքի ձիաքաշ երկաթուղու վրա
ծառայողները այս օրերս գործադուլ արեցին,
պահանջելով որ իրանց թոյլատրվի օրական մի-
այն 12 ժամ աշխատել և այդ միջոցին մի ժամ և
կէս տրվի իրանց՝ ճաշելու և հանգստանալու հա-
մար:

«Vossische Zeitung» լրագրում կարդում ենք,
որ Իրլանդիայում, կամ գոնէ այդ երկրի մի քա-
նի մասերում շուտով պիտի վերացվին մինչև այժմ
ոյժ ունեցած ժամանակաւոր խխտ օրէնքները և
նրանց գործադրութեան համար երկրի մէջ հաս-
տատված յառուկ դատարանները: Առհասարակ
Իրլանդիային վերաբերեալ բացառական օրէնս-
դրութիւնը պիտի նշանաւոր կերպով մեղմանայ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յունիսի: Նրէկ երկիդան
Թագուհի կայսրուհին ուղեւորելը Կրիմից Պետեր-
բուրգ: Նորին Մեծութեան հետ գնում են յու-
նաց Թագուհին, Մեծ Իշխան Գեորգի Ալեքսանդ-
րովիչ, Մեծ Իշխանուհի Կսենիա Ալեքսանդրովնա,
յունաց պրինցուհի Մարիա, պրինց Բրիտանֆոր
և Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայովիչ: Նրէկ
առաւօտեան Թագաժառանգ Յեսարելիչ հասաւ
Ալազան:

ՊԱՐԻՋ 10 յունիսի: Ալմանախ աւագակային
խումբը յանկարծակի յարձակում գործեց Ալրիա-
նօպոլի արուարձանի վրա 15 հօգով և զիններ
վերցրեց շատ նշանաւոր անձանց, որպէս զի յի-
տոյ նրանց փրկանքով ապառ: Բայց Ալրիանօ-
պոլի բերդապահ քաղիք մի վաշտ օրօք ընկաւ
աւագակների ետեից, որոնք փախան դէպի սա-
բերը՝ արձակելով գերիներին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յունիսի: Տեխնիկական ընկե-
րութեան անդամների ղեկավարութեամբ՝ կոմս
Ալաքսանդր Սպարապետով օդապարիկները լցնե-
լիս՝ սպանվեցան չորս բանտարներ, որոնք գտնաւ
պոկվելով վեր բարձրացրեց, և ապա նրանք վայր
ընկան 20 սաժէն բարձրութիւնից:

ԲԵՐԼԻՆ, 11 յունիսի: Հասարակական աշխա-
տանքների միջոցաւ Մայրաքաղաքի պաշտօնից արձակ-
ված է: Կայսրը չնորհեց նրան իր մարմարօտի
կիսարձանը:—Կայսրը չնորհակալութիւն յայտնեց
կոմս Շուլենբերգին և նրան փոխ-գնդապետի աս-
տիճան տուեց այն ճառի համար, որը նա ար-
տասանել է պատգամաւորների ժողովում՝ իշխան
Բիսմարկի քաղաքականութեան դէմ:

ՊԱՐԻՋ, 11 յունիսի: Սենատը միջոց պատգա-
մաւորների ժողովը ընդունած առաջարկը՝ հողա-
յին հարկերը 6 միլիոն ֆրանկով պակասեցնելու
համար:—Մեխիստ պատրաստուել հնարած միջո-
ցը ապօրինի կերպով ծախելու գործի առիթով
Ֆրէյսլին յայտնում է, որ ոչ մի օտար պետու-
թիւն չը գիտէ Ֆրանսիական սպառազինութեան
զաղանքը, և որ ոչ մի օֆիցեր պարտադրանք չէ
եղել:—Կարձ վրձարանութիւններից յետոյ պատ-
գամաւորների ժողովը վճռեց հաւաստութիւն
յայտնել Ֆրէյսլինի պետական պաշտպանու-
թեան գործի ապահովութեան համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունիսի: Մեծ Իշխան Միխա-
յիլ Միխայովիչի և նրա կալուածքի վրա լինա-
մակալութիւն է նշանակված, որ յանձնված է
Միխայիլ Նիկոլայովիչ և Գեորգի Միխայովիչ Մեծ
Իշխաններին:

ԲԱՍՏԱՎԱՅԻՑ, 12 յունիսի: Քաղաքապետ-
ըն, յունիսի 10-ին, Պոկովկայից ստացաւ զինե-
րալ Բէնէլիսի նահանգապետից հետեւեալ հեռա-
գիրը. «Թագաժառանգ Յեսարելիչ, թողնելով ինձ
մուրեան շրջանը, որորումս դուրս հրապայցի կնձ
հաղորդել չնորհակալութիւն Բագալէշիսկի բը-
նակչներին այն բուրց ախորժիկ բաների հա-
մար, ինչ որ Նորին Բարձրութիւնը տեսաւ քա-
ղաքում: Բաղաւոր եմ հաղորդել այդ քաղաքա-
յին դուային համար ձեք խնդրած պատկերը Նո-
րին Բարձրութիւնը բարեհաճեց խոստանալ Պե-
տերբուրգից ուղարկել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՈՍԱ
Յունիսի 11-ին

Լուրջօրի վրա 10 ֆունտ արծէ . . . 85 ր. 60 կ.	
Բերլինի վրա 100 մարկ . . . 41 > 87 1/2 >	
Փարիզի վրա 100 ֆրանկ . . . 33 > 85 >	
Ռուբլի . . . արծէ . . . 6 > 87 >	
Մաքսային կուպոններ . . . 137 > — >	
Արծաթ . . . 1 > 05 >	
Բորսային դիվիդանդներ . . . 33/4 > 50/0 >	
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . . . 103 > 75 >	
— — — 2-րդ — 103 > 25 >	
— — — 3-րդ — 100 > — >	
— — — 4-րդ — 100 > — >	
— — — 5-րդ — 100 > — >	
— — — 6-րդ — 101 > 50 >	
60% ոսկեայ ընկաւ 142 > 75 >	
40% ոսկեայ փոխառութիւն > — >	

